Մ Ա Ս I-Բ

Հարկաբյուջետային քաղաքականություն

Երկարաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները

Հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների (եկամուտների, ծախսերի, բյուջետային դեֆիցիտի և պարտքերի) հրապարակումը արտացոլում է Հայաստանի Հանրապետության կառավարության պատրաստակամությունը հարկաբյուջետային քաղաքականության թափանցիկությունն ապահովելու և այդ բնագավառում հեռահար մոտեցում կիրառելու առումով: Մասնավորապես, կառավարությունը հանձն է առնում համակշռել սոցիալական և այլ առաջնահերթ ծախսեր կատարելու անհրաժեշտությունը կայուն հարկաբյուջետային քաղաքականություն ապահովելու անհրաժեշտության հետ՝ ժամանակի ընթացքում պարտքերի կուտակում թույլ չտալու նպատակով:

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը մշակել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ, որոնք ամրագրված են ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում: ՀՀ 2008-2010թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման ընթացքում ՀՀ կառավարությունն առաջնորդվել է նշված երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներով: Դրանք նաև հիմք կծառայեն ՀՀ կառավարության ընթացիկ քաղաքականությունների և երկարաժամկետ նպատակների համաձայնեցվածությունը գնահատելու համար:

Ստորև բերված աղյուսակ 1.1-ում ներկայացված են ՀՀ կառավարության միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականությունը արտացոլող ամփոփ ցուցանիշները[1]:

[1] 2006, 2007, 2008թթ ցուցանիշները բերված են 2008թ-ից հանրապետությունում ներդրվող ՊՖՎ (GFS) -2001 նոր դասակարգման համաձայն: Դրա հետ մեկտեղ, 2006-2007թթ. ցուցանիշները 2008 թվականի համար ծրագրավորվող ցուցանիշների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով արտացոլում են նաև ՀՀ պարտադիր սոցիալական

Աղյուսակ 1. 1 2006-2008թթ հարկաբյուջետային ամփոփ ցուցանիշները (նոր՝ ՊՖԿ 2001 դասակարգմամբ)

Ցուցանիշներ	2006թ փաստացի	2007 ծրագիր[2]	2008թ նախագիծ
Ա. Արտահայտված մլրդ դրամով			
1. Ընդամենը եկամուտներ	**501.4**	**586.1**	**744.7**
2. Ընդամենը ծախսեր	**518.8**	**632.5**	**820.8**
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	**428.1**	**509.8**	**658.0**
որից սոցիալական ապահովագրության բյուջեի ծախսեր	71.5	85.0	115.3
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	**90.7**	**122.7**	**162.8**
որից՝			
ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ ծախսեր)	106.7	142.5	170.8
ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր (ըստ հին դասակարգման՝ կապիտալի հետ հործառնություն-ներից եկամուտներ)	(16.0)	(19.8)	(8.0)
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	**17.4**	**46.4**	**76.0**
Բ. Արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով			
1. Ընդամենը եկամուտներ	18.9	19.1	21.2
որից՝			
2. Ընդամենը ծախսեր	19.5	20.6	23.3
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	16.1	16.6	18.7
որից սոցիալական ապահովագրության բյուջեի ծախսեր	2.7	2.8	3.3
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	3.4	4.0	4.6
որից՝			
ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ ծախսեր)	4.0	4.6	4.8
ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր (ըստ հին դասակարգման՝ կապիտալի հետ հործառնութ-յուններից եկամուտներ)	(0.6)	(0.6)	(0.2)
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	0.6	1.5	2.1
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	2,657.1	3,076.0	3,520.0
Անվանական ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	6,387.3	8,616.2	10,461.2

ապահովագրության բյուջեի համապատասխան ցուցանիշները, քանի որ դրանք 2008 թվականից նախատեսվում է ներառել պետական բյուջեում:

[2] ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով հաստատված հարկաբյուջետային ցուցանիշները (նոր դասակարգմամբ) և դրանց հաշվարկների հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշներ:

Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները

Հիմք ընդունելով ՀՆԱ-ի 21.2 %-ի չափով կանխատեսված ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 2.1 %-ի չափով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է ապահովել ծախսերի մակարդակը ՀՆԱ-ի 23.3 %-ի կամ 820.8 մլրդ դրամի չափով: Միջնաժամկետ հեռանկարում նախատեսվում է ապահովել հարկային եկամուտներ և պետական տուրք/ՀՆԱ հարաբերության աճ՝ միջին տարեկան 0.4 տոկոսային կետով:

Նշված պայմաններում դրական միտումները կշարունակվեն նաև պետական պարտքի բնագավառում: Ոչ արտոնյալ վարկերի՝ արդեն իսկ վերաձևակերպված լինելու պայմաններում արտաքին պարտքի աճը էական ազդեցություն չի ունենա երկրի վճարունակության վրա:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրավորվող հարկաբյուջետային ցուցանիշները ընդհանուր առմամբ համահունչ են երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներին: Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ ՄԺԾԾ հրապարակումից հետո անցած ժամանակահատվածում տնտեսության զարգացման ձևավորված մակրոտնտեսական միտումներն անհրաժեշտ դարձրեցին ՄԺԾԾ ցուցանիշներում որոշակի ճշգրտումների կատարումը (օրինակ՝ 2008 թվականի ՀՆԱ-ի դեֆլյատորի ներկայիս սպասումները գերազանցում են ՄԺԾԾ-ով ծրագրավորված ցուցանիշը 1.0 տոկոսային կետով, որն իր ազդեցությունն ունեցավ նաև 2008 թվականի ՀՆԱ-ի կանխատեսվող անվանական մեծության վրա): Նշված մակրոտնտեսական բարենպաստ զարգացումները հիմք հանդիսացան, որպեսզի Նախագծով 2008 թվականի համար հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով ծրագրված ցուցանիշը վերանայվի: Բացի այդ, կառավարության որդեգրած քաղաքականության համաձայն հարկային նոր ապառքների առաջացման կանխարգելմանը, նախորդ տարիներին կուտակված ապառքների մարմանը, ինչպես նաև չհարկվող (ստվերային) շրջանառությունների կրճատմանն ուղղված վարչարարական միջոցառումների կիրառումը հուսալի երաշխիք կհանդիսանա հարկային եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացման համար: Այս գործոնների աղդեցությամբ 2008 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով պետական բյուջեի մուտքերը 48.3 մլրդ դրամով կամ 8.8 %-ով, իսկ հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաբերությունը 1.2 տոկոսային կետով կգերազանցեն ՄԺԾԾ-ով նախատեսված համապատասխան ցուցանիշները:

Պաշտոնական դրամաշնորհների (տրանսֆերտների) գծով ՄԺԾԾ-ով նախատեսված 28.9 մլրդ դրամի և Նախագծով առաջարկվող 35.7 մլրդ դրամ գումարների միջև 6.8 մլրդ դրամ տարբերությունը պայմանավորված է ինչպես դրամաշնորհների կառուցվածքի, այնպես էլ հաշվարկների հիմքում դրված 1 եվրոյի և 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾԾ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 459.9 և 340.5 դրամ, Նախագծում՝ 461.2 և 336.5 դրամ):

ՄԺԾԾ-ի շրջանակներում ծրագրված մուտքերի նկատմամբ փոփոխություններ են կրել նաև այլ եկամուտների (հին դասակարգմամբ՝ ոչ հարկային եկամուտների) գծով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված գումարները: Այլ եկամուտների գծով 2008 թվականի համար ՄԺԾԾ-ով նախատեսվել է 8.1 մլրդ դրամ, Նախագծով՝ 9.0 մլրդ դրամ: Հաշվի է առնվել, ինչպես այլ եկամուտների կազմում ներառված առանձին եկամտատեսակների գծով ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսներին հավաքագրված մուտքերի բարձր աճի տեմպերը, այնպես էլ այլ եկամուտների (ոչ հարկային եկամուտների) կազմում ՄԺԾԾ-ի շրջանակներում կատարված կանխատեսումների նկատմամբ կրած կառուցվածքային փոփոխությունները:

Արդյունքում ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվող բյուջետային եկամուտների ընդհանուր ՄԺԾԾ-ին համադրելի ծավալը (հին դասակարգմամբ և առանց պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջետային ցուցանիշների) ՄԺԾԾ-ով նախատեսվածի դիմաց ավելացել է 60.8 մլրդ դրամով կամ 10.4 %-ով, իսկ ծախսերինը՝ ավելացել է 74.9 մլրդ դրամով կամ 11.4 %-ով: Վերը նշված փոփոխությունները բնականաբար ազդեցություն ունեցան նաև 2008 թվականի բյուջետային դեֆիցիտի մեծության վրա (վերջինիս գումարն ավելացել է 14.0 մլրդ դրամով):